ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 70 ԵՎ ՀՀ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 80-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԸ

Յոթ տասնամյակ է արդեն, որ, լինելով հայոց միջնադարյան կրթամշակութային փառապանծ կենտրոնների ավանդների շարունակողն ու զարգացնողը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը պատվով ու պատասխանատվությամբ է կատարում իր վսեմ առաքելությունը բժշկական կադրերի պատրաստման, բժշկագիտության և առողջապահության զարգացման հույժ կարևոր գործում: Երևանի պետական բժշկականն այսօր էլ իր ձեռքում է պահում մեր ժողովրդի առողջության պահպանմանն ուղղված կրթության լուսավոր ջահը: Նրա հիմնադրումը մեր ազգի նորագույն պատմության ամենանշանավոր երևույթներից է:

Աշխարհի հնագույն գրապահոցներից մեկի՝ Մատենադարանի մագաղաթյա էջերը հավաստում են, որ աշխարհում առաջինը քրիստոնեական կրոն ընդունած հայասարմենների Նաիրյան թագավորությունում, ի թիվս այլ բազմաթիվ գիտությունների, գոյություն է ունեցել նաև մարդկանց բուժելու արվեստը: Այն իր ծաղկումն ու զարգացումն է ապրել առավելապես միջին դարերում: Գրիգոր Մագիստրոսը (11-րդ դար), Մխիթար Հերացին (12-րդ դար), Գրիգորիսը (13-րդ դար), Ամիրդովլաթ Ամասիացին (15-րդ դար) եղել են միջնադարյան Հայաստանի նշանավոր բժիշկներ, որոնց գրած բժշկարանները դասագիրք են ծառայել սպագա սերունդներին:

Աներկբայորեն Մ.Հերացու անվան հետ է կապված գիտական բժշկության սկզբնավորումը միջնադարյան Հայաստանում: Նրա ինքնատիպ բժշկագիտական երկի՝ «Ջերմաց մխիթարություն» բժշկարանի գիտական բնորոշումը դուրս է գալիս ազգային սահմաններից և դառնում միջնադարյան բժշկագիտության նվաճումներից մեկը :

Իր ամենաճակատագրական փարեթվերից մեկում, Մանահինի, Տաթևի, Անիի, Հաղպատի, Գլաձորի համալսարաններ ունեցած ու կորցրած ժողովուրդը քսաներորդ դարի սկզբներին, երբ Հայաստանը անկախություն ձեռք բերեց և վերականգնեց դարեր առաջ կորցրած պետականությունը, պետության հիմքածության առարկա երկին դարձավ հոգևոր կյանքի զարգացումը և 1919 թվականին բացեց իր նոր համալսարանը, որի համակազմում 1920թ. բացվեց բժշկական ֆակուլտետը:

Հայկական ԽՍՀ ժողկոմխորհրդի 1922թ. մարտի 15-ի որոշմամբ ստեղծվեց Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: Հիմնադրումից անմիջապես հետո այն դարձավ բժշկագիտության հզոր մի օջախ: Երկրի ծայրաստիճան քայքայված պայմաններում, երբ բացակայում էին կյանքի ու կենցաղի կազմակերպման ամենատարրական հնարավորությունները, երբ մոլեգնում էին սովն ու համաճարակը, հայ մտավորականության և իշխանության ներկայացուցիչները մեծ նվիրումով անասելի ջանքեր էին գործադրում բժշկական բարձրագույն դպրոց հիմնելու ուղղությամբ: Բժշկական ֆակուլտետը տեղադրված էր համալսարանի բակում գտնվող փոքրիկ տնակում, որը եղել էր նախկին սեմինարիայի բաղնիքը: Բժշկական ֆակուլտետի գործունեության բարելավման համար զգալի աշխատանքներ կատարեցին հանրապետության առաջնորդ Ս.Լազարևը, լուսժողկոմ Ա.Մռավյանը, համալսարանի ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, ֆակուլտետի առաջին դեկան Մ.Կամսարականը, ամբիոնների վարիչներ Վ. Արծրունին, Գ.Արեշյանը, Լ. Հովհաննիսյանը, Ս. Իսահակյանը և ուրիշներ: Դասախոսական կադրերի պակասը լրացնելու նպատակով Հայաստան հրավիրվեցին Հ. Քեչեկը, Հ. Գաբրիելյանը, Ա.Մելիք-Ադամյանը, Ա.Արզումանյանը, Գ.Մեղնիկյանը, Խ.Արխիպյանցը, Լ.Ճգնավորյանը և ուրիշներ, որոնք հիմնադրեցին ամբիոններ:

1930թ. բժշկական ֆակուլտետի բազայի վրա հիմնադրվեց Երևանի պետական բժշկական ինստիտուտը, որը կարճ ժամկետում դարձավ հանրապետությունում բժշկական կադրերի պատրաստման դարբնոց:

1922-27թթ. ընթացքում հիմնականում ավարտվեց բժշկական ֆակուլտետի ինչպես տեսական, այնպես էլ կլինիկական ամբիոնների կազմավորումը, ընդ որում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար՝ կապված ուսումնական պլանների իրականացման հաջորդականության հետ: 1930թ. ֆակուլտետն արդեն համալրված էր բժշկական բուհին անհրաժեշտ ավելի քան 30 ամբիոններով:

Հայաստանում բժշկական կադրերի պատրաստման պատմության մեջ նոր էջ գրվեց 1927թվականին. բժշկական ֆակուլտետը տվեց իր առաջին շրջանավարտները (32 բժիշկ): Պետհամալսարանի բժշկական ֆակուլտետը, չնայած իր համեստ կարողություններին և շրջանավարտների ոչ մեծ թվին, իր գործունեության 8 տարիների ընթացքում նշանակալից դեր խաղաց հանրապետության առողջապահության համակարգը բժշկական կադրերով ապահովելու գործում:

Բժշկական ինստիտուտը (1995 թվականից՝ համալսարանը) իր գոյության 70 տարիների ընթացքում ոչ միայն Հայաստանն ապահովեց անհրաժեշտ թվով բարձրորակ բժշկական կադրերով, այլև մեծաթիվ բժիշկներ պատրաստեց ԽՍՀՄ մյուս հանրապետությունների ու արտասահմանյան տարբեր երկրների համար:

Բժշկական ինստիտուտի առաջին ռեկտորն էր (այն ժամանակ՝ դիրեկտորը) Հակոբ Հովհաննիսյանը, որը մինչ այդ՝ 1922-30 թթ. ղեկավարում էր Երևանի պետական համալսարանը:

Մինչև 1931թ. ինստիտուտն ուներ միայն բուժպրոֆիլակտիկ ֆակուլտետ, իսկ 1931-32 ուստարում բացվեց նաև սանիտարահիգիենիկը: Վերջինիս նպատակն էր հանրապետության համար պատրաստել նաև սանիտարական բժիշկներ ու համաճարակաբաններ, որոնց կարիքը խիստ մեծ էր այդ տարիներին:

Հիմնադրման պահից ինստիտուտում ուսուցումը կատարվում էր միայն մայրենի լեզվով: Նկատի ունենալով, որ Երևանի բժշկական ինստիտուտ ընդունվելու ցանկություն ունեին ինչպես Հայաստանի, այնպես էլ հարևան հանրապետությունների ռուսական կրթությամբ հայազգի երիտասարդներն ու աղջիկները, 1939թ. բացվեց բուժպրոֆիլակտիկ ֆակուլտետի ռուսական բաժինը:

1931-32 ուստարում շահագործման հանձնվեց անատոմիական մասնաշենքը, որի մի մասը կառուցվել էր դեռևս 1927թ., և այնտեղ տեղափոխվեցին մորֆոլոգիական պրոֆիլի և դատական բժշկության ամբիոնները: 1939թ. կառուցվեց նաև կենտրոնական, այսպես կոչված կենսաքիմիական մասնաշենքի մի մասը, որտեղ տեղավորվեցին տեսական ամբիոնները և ինստիտուտի վարչակազմը:

Ինստիտուտի պատմության մեջ առանձնահատուկ հիշարժան է 1936 թվականը, երբ, նկատի առնելով բուհի աճը և կադրային ներուժը, վերջինիս ատենախոսությունների պաշտպանության և գիտությունների թեկնածուի, այնուհետև (1944թ.) նաև դոկտորի գիտական աստիճաններ շնորհելու իրավունք տրվեց: Դոկտորական ատենախոսություններ պաշտպանեցին Բ.Ա. Ֆանարջյանը, Լ.Ա. Հովհաննիսյանը, Մ.Ա. Մելիք-Ադամյանը, Հ.Ք. Բունիաթյանը, Ա.Բ. Ալեքսանյանը, Շ. Մ. Մաթևոսյանը, Լ.Ա. Հարությունյանը, Ս.Ս. Շարիմանյանը, որոնք հետագայում դարձան Խորհրդային Միության և նրա սահմաններից դուրս մեծ ճանաչում ստացած վստակաշատ գիտնականներ և երկար տարիներ գլխավորեցին ինստիտուտի համապատասխան ամբիոններ:

Ստալինյան բռնարարքներն իրենց խոր կնիքը դրեցին նաև բժշկական ինստիտուտի գործունեության վրա՝ խաթարելով նրա բնականոն գործընթացը: 1937թ. մեկը մյուսի հետևից անհիմն մեղադրանքներով ձերբակալվեցին և աքսորվեցին ինստիտուտի տնօրեններ Հ. Հովհաննիսյանը, Ա. Շահվերդյանը, ինչպես նաև պրոֆեսորներ Գ. Տեր-Հակոբյանը, Հ. Միրզա-Ավագյանը և ուրիշներ, որոնք հետագայում արդարացվեցին, և վերականգնվեց նրանց բարի անունը:

Բժշկականի դասախոսական անձնակազմին ու սաներին դժվարին փորձություն էր սպասվում Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Այսօր արդեն, պատերազմի հաղթական ավարտից տասնյակ տարիներ անց, կարելի է միանշանակ ու վստահաբար ասել, որ ինստիտուտի կոլեկտիվը պատվով դուրս եկավ այդ փորձությունից և իր արժանի ներդրումն ունեցավ Մեծ հաղթանակում:

Բժշկական ինստիտուտը օրինակելի կրթօջախ լինելուց բացի եղել և շարունակում է մնալ բժշկագիտական մտքի զարգացման կենտրոն: Դեռևս սկսած 1935 թվականից, ինստիտուտում պարբերաբար ու կանոնավոր հրավիրվել են գիտական նստաշրջաններ, որոնք շարունակվել են նույնիսկ պատերազմական ծանր տարիներին: Պատերազմի ավարտից ընդամենը մի քանի ամիս անց՝ 1945թ. նոյեմբերին, կազմակերպվեց նոր՝ հերթական 16-րդ գիտական նստաշրջանը: Հարկ է նշել, որ դրանք ընթանում էին հետաքրքիր ու գիտական բարձր մակարդակով, զեկուցումների բազմակողմանի ու սկզբունքային քննարկումներով:

Ուսանողների մեջ գիտահետազոտական աշխատանքների հմտություններ զարգացնելու և ապագա գիտամանկավարժական կադրեր պատրաստելու նախապայմաններ ստեղծելու նպատակով 1947թ. հիմնադրվեց ուսանողական գիտական ընկերությունը, որը հետագայում կոչվեց հայ մեծանուն բժիշկ և գիտնական Լ.Ա. Օրբելու անունով: Ինստիտուտի ՈՒԳԸ-ն անցել է կատարելագործման ու զարգացման երկար ու բեղմնավոր ուղի՝ ամբիոններին կից գործող առանձին խմբակներից վերածվելով գիտական լուրջ կազմակերպության: Ինստիտուտի ներկա ամբիոնների վարիչներից, պրոֆեսորներից ու դոցենտներից շատերն իրենց սկզբնական գիտական մկրտությունն ստացել են ՈՒԳԸ խմբակներում:

Բժշկական ինստիտուտի կյանքում ուշադրության արժանի և անսահման մեծ իրադարձություն տեղի ունեցավ 1957 թվականին: Սփյուռքահայ երիտասարդության ներկայացուցիչները հնարավորություն ստացան մայրենի լեզվով բարձրագույն բժշկական կրթություն ստանալ մայր հայրենիքում: Ստեղծվեց արտասահմանցի ուսանողների բաժինը, և սփյուռքի տարբեր գաղթօջախներից ժամանած հայազգի բազմաթիվ երիտասարդներ կարողացան ձեռք բերել բժշկի մասնագիտություն: 1987 թվականից ինստիտուտում սկսեցին սովորել նաև արտասահմանցի այլազգի ուսանողներ (արաբներ, հնդիկներ, պարսիկներ և այլն): Առ այսօր Երևանի բժշկականն ավարտել են արտասահմանցի ավելի քան 1400 քաղաքացիներ:

Այժմ համալսարանում սովորում են 18 երկրներից, այդ թվում՝ Սիրիայից, Հնդկաստանից, Լիբանանից, Իրանից, Հունաստանից, ԱՄՆ-ից, Չինաստանից, Բրազիլիայից ժամանած ավելի քան 600 արտասահմանցի քաղաքացիներ: Համալսարանը սերտ կապեր է հաստատել նախկին շրջանավարտների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Սիրիայի, Լիբանանի հայկական բժշկական ասոցիացիաների հետ: Մեր նախկին սաներից շատերը դարձել են անվանի բժիշկներ և առողջապահության կազմակերպիչներ՝ իրենց երկրներում առավել բարձրացնելով Երևանի պետական բժշկական համալսարանի հեղինակությունը:

Ինստիտուտում 1958 թվականից հրատարակվում է «Ապագա բժիշկ» բազմատպաքանակը՝ ուսանողների բարեկամն ու խորհրդատուն: Թերթի էջերում պարբերաբար լուսաբանվում են բուհական կյանքին առնչվող զանազան հարցեր, վեր են հանվում աշխատանքում տեղ գտած թերությունները, տպագրվում են դաստիարակչական, ճանաչողական, բժշկաէթիկական ու պատմական բնույթի հետաքրքիր հոդվածներ: Դրվատանքի է արժանի ուսանողական խորհրդարանի նախաձեռնությամբ հանրապետությունում միակ ուսանողական «Medicus» ամսաթերթի հրատարակությունը, որտեղ ուսանողները հանդես են գալիս հետաքրքիր հրապարակումներով և առաջարկություններով:

Իր գործունեության ողջ ժամանակաշրջանում բժշկական կադրերի պատրաստմանը զուգընթաց ինստիտուտը զբաղվել է նաև պրակտիկ բժիշկների մասնագիտացման ու որակավորման բարձրացման խնդիրներով: Այդ աշխատանքներն առավել նպատակասլաց և կանոնակարգված կազմակերպելու նպատակով 1958թ. ինստիտուտում ստեղծվեց բժիշկների կատարելագործման ֆակուլտետ, որի բազայի վրա էլ 1963թ. հիմնադրվեց բժիշկների կատարելագործման Երևանի համամիութենական ինստիտուտը (ներկայումս՝ Առողջապահության ազգային ինստիտուտ):

Մինչև 50-ական թվականների վերջը բժշկական ինստիտուտը պատրաստել է շուրջ 5000 բժիշկ երկու հիմնական (բուժական գործ և սանիտարական բժիշկ) մասնագիտություններով: Քանակական առումով այդ խնդիրը ինչ-որ չափով կարելի էր լուծված համարել: Սակայն հանրապետությունը մեծ կարիք ուներ մանկաբույժների ու ստոմատոլոգների: Նկատի ունենալով վերոնշյալը, 1958թ. կազմակերպվեց մանկաբուժական, իսկ 1961-ին՝ ստոմատոլոգիական ֆակուլտետները՝ համապատասխան մասնագիտական ամբիոններով:

Համալսարանի մասնագիտացված ստորաբաժանումը՝ կենտրոնական գիտահետազոտական լաբորատորիան (ԿԳՀԼ) հիմնադրվել է 1964 թ.: 1992թ. ԿԳՀԼ-ն վերակազմավորվեց գիտահետազոտական կենտրոնի (ԳՀԿ), որն այժմ համալսարանում գործում է որպես ինքնուրույն ստորաբաժանում:

Բժշկական ինստիտուտի կյանքում տեղի ունեցած կարևոր ու հիշարժան իրադարձություններից մեկն էլ 1972թ. դեղագիտական ֆակուլտետի հիմնումն էր, որը նշանակալի դեր խաղաց հանրապետությունը դեղագիտական բարձրորակ կադրերով ապահովելու գործում: Եվ, վերջապես, 1975թ. ստեղծվում է նախապատրաստական բաժանմունքը, որը խորհրդային տարիներին համալրվում էր արտադրությունից եկած և բանակից զորացրված երիտասարդներով: Այսօր այդ բաժանմունքում սովորում են արտասահմանյան երկրների այլազգի քաղաքացիները և համապատասխան ծրագրով նախապատրաստվում են համալսարան ընդունվելու համար:

Երևանի բժշկականը իր գոյության բոլոր տարիներին պատրաստել է ավելի քան 24. 000 բժիշկ, որոնցից 1.400-ը արտասահմանյան 26 երկրների քաղաքացիներ են: Համալսարանի շրջանավարտներից շատերը դարձել են հանրահայտ գիտնականներ, առողջապահության հմուտ կազմակերպիչներ, գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների տնօրեններ ու գիտական բազմամարդ դպրոցների ղեկավարներ ու ակադեմիկոսներ:

Նախկին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահությունը ժողովրդական առողջապահության համար որակյալ մասնագետների պատրաստման և բժշկական գիտությունների զարգացման գործում ծառայությունների համար 1980թ. դեկտեմբերի 15-ի հրամանագրով Երևանի պետական բժշկական ինստիտուտին պարգևատրեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Ընդառաջելով մեր բուհի ուսանողների և աշխատակիցների ցանկությանը՝ ՀՀ նախարարների խորհուրդը 25.05.1989թ. որոշմամբ Երևանի բժշկական համալսարանը անվանակոչեց միջնադարի մեծ բժշկապետ ու մտածող Մ. Հերացու անունով:

Բժշկական համալսարանի ուսանողության ու դասախոսների համար քաղաքացիական ու մասնագիտական պարտքի դրսևորման մեծ փորձություն եղավ 1988թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժը: Առանց երկմտանքի կարելի է արձանագրել, որ այդ ծանր օրերին ապագա բժիշկները գտնվեցին իրենց կոչման բարձրության վրա, ցուցաբերեցին բժշկական պարտքի, արիության ու մարդասիրության դրսևորման փայլուն օրինակներ:

Երևանի պետական բժշկական համալսարանի զարգացման պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի վերջին տասնամյակը: Այդ ժամանակահատվածը, չնայած անցումային շրջանին բնորոշ օբյեկտիվ լուրջ դժվարությունների, բժշկական համալսարանի համար վստահաբար կարելի է համարել ուսումնական գործընթացի բարեփոխումների, տեխնիկական հագեցվածության և միջազգային համագործակցության ընդլայնման ժամանակաշրջան: Բժշկականի վերելքն ավելի ընդգծվեց 1996 թվականից հետո, երբ հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքը սկսեց անտիճանաբար վերակենդանանալ ու նկատելիորեն ակտիվացան համալսարանի կապերը արտասահմանյան երկրների առաջատար բժշկական կենտրոնների հետ:

1999-2000 ուստարում կատարվեց ֆակուլտետների միավորում: Բուժական, մանկաբուժական ու բժշկականիմարգելման ֆակուլտետները միավորվեցին որպես մեկ՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետի:

Բժշկական համալսարանի հետխորհրդային շրջանի պատմության մեջ տեղի ունեցած իրադարձություններից իր կարևորությամբ առանձնահատուկ տեղ է գրավում ռազմաբժշկա-

կան ֆակուլտետի բացումը: Ըստ արժանվույն գնահատելով մեր նորանկախ պետության համար ֆիզիկապես ամուր, առողջ ու մարտունակ բանակ ունենալու, ինչպես նաև բանակը բարձրորակ զինվորական բժիշկներով ապահովելու կարևորությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ 1994թ. բժշկական համալսարանի ռազմական պատրաստականության ամբիոնի բազայի վրա հիմնադրվեց և այսօր էլ հաջողությամբ գործում է ռազմաբժշկական ֆակուլտետը: Անցած 6 տարիների ընթացքում համալսարանի ղեկավարության ու ՀՀ պաշտպանության նախարարության համատեղ ջանքերով ֆակուլտետը վերածվեց ժամանակակից ռազմաբժշկական օրինակելի ուսումնական ստորաբաժանման:

Ներբուհական աշխատանքների կազմակերպման գործում մեծ է ուսանողական խորհրդարանի դերը: Վերջինս կազմավորվել է 1992թ. մեր համալսարանի ուսանողների նախաձեռնությամբ և առաջին նմանատիպ երիտասարդական կառույցն է հանրապետության բուհական համակարգում:

Քանի որ ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով բժշկականի դասախոսները զրկվեցին նախկին միության կենտրոնական քաղաքներում որակավորման բարձրացման հնարավորություններից, 1997թ. բժշկական համալսարանում կազմավորվեց ու հաջողությամբ գործում է «Դասախոսների որակավորման բարձրացման» դասընթացը:

Երևանի պետական բժշկական համալսարանը իր գործունեության ողջ ժամանակաշրջանում բարձրորակ բժշկական կադրեր պատրաստելուց բացի լուրջ ու ծանրակշիռ ներդրում է ունեցել խորհրդային ու համաշխարհային բժշկագիտության զարգացման ասպարեզում: Բժշկականի գիտնականները հանդես են եկել մի շարք նորարական առաջարկներով, որոնց ներդրումը գործնական առողջապահության մեջ նպաստել է հիվանդների բուժման ու հիվանդությունների կանխարգելման հիմնախնդիրների լուծմանը: Բժշկական համալսարանի գիտնականների նվաճումները ակնառու են տեսական ու կիրառական բժշկության բոլոր բնագավառներում: Նրանց ղեկավարությամբ ու ակտիվ մասնակցությամբ Հայաստանում ստեղծվել են բժշկագիտության մի շարք ճյուղեր, այդ թվում բժշկական մանրէաբանություն, համաճարակաբանություն, ռենտգենաբանություն, ախտաբանական անատոմիա, նյարդավիրաբուժություն, սրտաբանություն և այլն: Զգալի են մեր գիտնականների ծառայությունները նաև վիրուսաբանության, կենսաքիմիայի, իմունաբանության, դեղաբանության, մակաբուծաբանության և բժշկագիտության այլ ճյուղերի զարգացման բնագավառներում:

Գոհունակությամբ պետք է նշել՝ մի խումբ ականավոր գիտնականների գիտամանկավարժական արգասաբեր գործունեությունը դուրս է եկել Երևանի պետական բժշկական համալսարանի շրջանակներից: Տարբեր ժամանակաշրջաններում նրանք առողջապահության բնագավառում հատուկ ստորաբաժանումների (ծառայություն, վարչություն և այլն) ձևավորման ուղղությամբ հսկայական կազմակերպչական աշխատանքներ են տարել, որոնք վերակազմավորվել են և այժմ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և առողջապահության համակարգերում գործում են որպես ինքնուրույն հաստատություններ և պատվով կրում նրանց անունները. ինչպես՝ կենսաքիմիայի ինստիտուտը՝ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանի, նուրբ օրգանական քիմիային ինստիտուտը՝ ակադեմիկոս Լ. Լ. Մնջոյանի, սրտաբանության ինստիտուտը՝ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանի, համաճարակաբանության, վարակաբանության և մակաբուծաբանության ինստիտուտը՝ ակադեմիկոս Ա. Բ. Ալեքսանյանի, ուռուցքաբանության գիտահետազոտական կենտրոնը՝ ակադեմիկոս Վ. Բ. Ֆանարջյանի, Առողջապահության ազգային ինստիտուտը՝ ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի, արյունաբանության և արյան փոխներարկման ինստիտուտը՝ պրոֆեսոր Ռ. Օ. Ցոլյանի, վնասվածքաբանության և օրթոպեդիայի ինստիտուտը՝ պրոֆեսոր Խ. Ա. Պետրոսյանի, կուրորտաբանության և ֆիզիոթերապիայի ինստիտուտը՝ Ա. Ա. Հակոբյանի անունով:

Բարձրագույն կրթությամբ բժշկական կադրերի պատրաստման և բժշկագիտության տարբեր բնագավառների զարգացման գործում անգնահատելի ծառայություններ ունեն համալսարանի ռեկտորները, որոնց ջանքերի շնորհիվ աստիճանաբար ընդլայնվել են ուսումնական և գիտական բազաները, ամբիոններն ու լաբորատորիաները հարստացել են նորագույն բժշկական տարքավորումներով: Ռեկտորներից հատկապես պետք է առանձնացնել Վ. Միքա-

յելյանին, որը համալսարանի 70-ամյա պատմության ընթացքում միակ կինն էր, որին վստահվել էր այդ պատասխանատու պաշտոնը: Հիշատակության են արժանի ռեկտորներ Հ. Հովհաննիսյանը, Գ. Ղևոնդյանը, Ն. Հակոբյանը, Ս. Գալստյանը, Է. Գաբրիելյանը, Վ. Աստվածատրյանը, որոնց ղեկավարությամբ համալսարանը հատավ բացառիկ հաջողությունների և ձեռք բերեց մեծ հեղինակություն:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում այսօր գիտահետազոտական արգասաբեր աշխատանք են կատարում ՀՀ ԳԱԱ չորս ակադեմիկոսներ, ՌԴ ԲԳԱ երկու թղթակից-անդամներ, գիտությունների 115 դոկտոր, պրոֆեսորներ և 349 թեկնածուներ և դոցենտներ: Տարբեր տարիներին համալսարանում աշխատել են նախկին ԽՍՀՄ ԲԳԱ և Հայաստանի ԳԱ, ինչպես նաև ներկայումս ՀՀ ԳԱԱ և ՌԴ ԲԳԱ 17 ակադեմիկոսներ և թղթակից -անդամներ, ՀՀ գիտության և բարձրագույն դպրոցի 55 վաստակավոր գործիչներ:

1996-97 ուսումնական տարվանից համալսարանը մասնակցում է տրանսեվրոպական համագործակցության շրջանակներում բարձրագույն կրթության բնագավառում Եվրախորհրդի և ԱՊՀ երկրների միջև գործող Tacis-Tempus ծրագրին: Ներկայումս բժշկականի աշխատակիցները լայնորեն մասնակցում են միջեվրոպական մի շարք ծրագրերին: Դրանցից են՝ Tacis-tempus, Եվրախորհրդի, Հունաստանի բարձրագույն կրթության նախարարության, Նիդեռլանդների կառավարության զարգացման ու համագործակցության և Գերմանիայի ակադեմիական փոխանակության ծրագրերը: Շարունակվում և խորացվում է ԱՄՆ ու Կանադայի բժշկական համալսարանների հետ արդեն սկզբնավորված համագործակցությունը:

Նկատի ունենալով Երևանի բժշկական ինստիտուտի մեծ ու ծանրակշիռ ներդրումը բժշկական կադրերի պատրաստման ու բժշկական գիտության զարգացման գործում, ՀՀ կառավարության կողմից 1995թ. նրան տրվեց համալսարանի կարգավիճակ: Ապագա բժիշկների պատրաստման գործում և հետդիպլոմային ուսուցումը լավագույնս կազմակերպելու և համալսարանի ղեկավարության հետևողական աշխատանքի շնորհիվ ՀՀ կառավարության 1995թ. մարտի 15-ի որոշմամբ բժշկական համալսարանի ենթակայությանը հանձնվեց իր հարևանությամբ գտնվող հիվանդանոցային համալիրը՝ որպես համալսարանական կլինիկա:

Այսօր արդեն հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ համալսարանը հանրապետությունում բժշկական կադրերի պատրաստման պետական ակադեմիական բնույթի միակ բարձրագույն կրթօջախն է, որն իր կուռ կառույցներով մշակել ու ներդրել է ուսումնամեթոդական, գիտագործնական ծրագրեր, որոնց շնորհիվ և արժանացել է միջազգային ճանաչման: Այն, իրավամբ, դասվում է աշխարհի լավագույն բժշկական բուհերի շարքը, պատվավոր տեղ է զբաղեցնում Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Հաշվեցուցակում, և, որ ամենակարևորն է՝ դիպլոմը ճանաչվում է Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի բազմաթիվ երկրներում:

Ակադեմիկոս Վ. Պ. Հակոբյան
Երևանի Մ. Հերացու անվան պետական
բժշկական համալսարանի ռեկտոր